ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2011թ. մայիսի 13-ին կայացած նիստում «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման» միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա ստանալու նպատակով «Էկոպրոտեկտ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. «Էկոպրոտեկտ» ՍՊԸ կանոնադրության պատճեն
2. իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճեն
3. պետական տուրքի վճարման անդորրագրի պատճեն
4. քիմիական թափոնների այրման սարքավորման նկարագիրը
5. մասնագետների որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները
6. տեղեկանք համապատասխան տարածքային հարկային տեսչությունից՝ հաշվառման մեջ լինելու մասին:

Հայտատուի կողմից ներկայացվել են նաև «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ին տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը և «Էկոպրոտեկտ» ՍՊԸ նախատեսվող կենսաբանական և քիմիական թափոնների վնասազերծման կայանքի կառուցման և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը կնպաստի վտանգավոր թափոնների հեռացման հետ կապված հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացության առկայությունը և ներկայացված փաստաթղթերի լիակազմությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց նշված կազմակերպությանը տրամադրել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ա. Հարությունյան

Կ. Կարապետյան

Ա.Ալեքսանդրյան

Ն. Կնյազյան

Ջ.Ղլիչյան

Ա. Սարոյան

Մ. Քամալյան

Ա. Մարտիրոսյան

Տ. Ամիրյան

Ի. Հակոբյան

Ա. Պետիկյան